Р.СААКЯН, Г.МАХМУРЯН, Н.ОГАНЕСЯН, А.МАНУЧАРЯН, Новая история Армении в трудах современных зарубежных авторов

Ереван, Издательство НАН Армении, 1993, 286 стр.

(Ռ.ՍԱՀԱԿՅԱՆ, Գ.ՄԱԽՄՈՒՐՅԱՆ, Ն.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Ա.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ, Հայաստանի նոր պատմությունը արտասահմանյան արդի հեղինակների աշխատություններում.

Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1993, 286 էջ)

Իր հին պատմությամբ և մշակույթով Հայաստանը մշտապես գրավել է օտարերկրացի ճանապարհորդների, աշխարհագրագետների, գիտնական-պատմաբանների ուշադրությունը: Ինչպես վկայակոչվում է գրքի նախաբանում, XVII դարի երկրորդ կեսից մինչև XX դարի 60-ական թվականները, միայն եվրոպական հինգ լեզուներով լույս են տեսել մոտ յոթ հազար գիրք, հոդված, տարբեր բնույթի հետազոտություններ՝ նվիրված Հայաստանի պատմական անցյալին, լեզվին, գրականությանը, գիտությանն ու մշակույթին: Հետագա տարիներին հայ ժողովրդի մասին գրականությունը հարստացել է նորանոր հրատարակություններով՝ ինչպես արևմտաեվրոպական, այնպես էլ արաբական, թուրքական և ամերիկյան աղբյուրներից: Ռ.Սահակյանի կարծիքով, արտասահմանյան, մասնավորապես՝ թուրք հեղինակների հետաքրքրությունը հայոց պատմության հանդեպ առավել սրվեց 1965թ. ապրիլին աշխարհի շատ երկրներում Մեծ եղեռնի 50-ամյակին նվիրված սգո միջոցառումների կապակցությամբ, երբ համաշխարհային հանրությունը կրկին ուշադրությունը բևեռեց 1915-ի մոռացության տրված իրադարձություններին: ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Անգլիայի, Իտալիայի, Գերմանիայի, Շվեյցարիայի, Եգիպտոսի, Իրանի և այլ երկրների պարբերական մամուլի էջե-

ում հրապարակ հանվեցին ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ նյութեր, վերահրատարակվեցին վավերագրական հավաստի աղբյուրներ, պաշտոնական փաստաթղթեր, վկայություններ: Այդ առիթով մի շարք երկրների հեղինակները սկսեցին ավելի հանգամանորեն անդրադառնալ Հայաստանի պատմությանը:

Ներկա մենագրության մեջ հեղինակները բազմակողմանի գիտական վերլուծության են ենթարկել 1960-80թթ. Թուրքիայում, ԱՄՆ-ում, Հորդանանիայում, Անգլիայում, Գերմանիայում և արաբական երկրներում տրված՝ Հայաստանի նոր պատմությանը վերաբերող ուսումնասիրությունները: Մասնավորապես՝ հետազոտության առարկա են դարձել այնպիսի հանգուցային հարցեր, ինչպիսիք են՝ արևմտահայության սոցիալ - տնտեսական կացությունը, 1890-կան թվականների հայկական ջարդերը, երիտթուրքական հեղափոխությունը և վերջապես՝ 1915թ. ցեղասպանությունը:

* * *

Աշխատության առաջին՝ «Հայաստանի նոր պատմությունը արդի թուրքական պատմագրության լուսաբանմամբ» գլխում հեղինակը՝ Ռ.Սահակյանը, փաստական հարուստ նյութի հիման վրա հանգամանորեն վերլուծում է թուրք հեղինակների մեկնաբանությունները, որոնք վերաբերում են հայ-թուրքական հարաբերություններին և Հայկական հարցին: Նա հիմնավորում է իր այն եզրակացությունը, որ թուրք գիտնականները կեղծում ու ենթագիտում են փաստերն ու իրադարձությունները, պատմական ճշմարտությունը Հայաստանի, հայ ժողովրդի պատմության մասին: Հեղինակի կարծիքով, նման ենթագիտումները քաղաքական նպատակ են հետապնդում՝ թաքցնել ճշմարտությունը Օսմանյան Թուրքիայում XIX դարի վերջին և XX դարի սկզբին պետականորեն իրականացված հայահալած քաղաքականության մասին, մոլորեցնել ձևավորվող միջազգային կարծիքը 1915թ. ցեղասպանության ճանաչման հարցում: Անտեսելով պատմական փաստերը՝ թուրք պատմագիտությունը շարունակում է պաշտպանել Թուրքիայի պաշտոնական շրջանների և քարոզչական մեքենայի՝ հայկական ցեղասպանության ժխտման տեսակետը. այն փորձում է ապացուցել, թե տեղահանությունը, իբր, թելադրված էր պատերազմական իրադրությամբ և բխում էր հայերի անվտանգության շահերից: Հայերը կորուստներ են ունեցել տեղահանման ճանապարհին, սակայն երիտթուրքերի կառավարությունը մեղավոր չէ այն բանում, որ տեղական իշխանությունների

առանձին անբարեխիղճ և անպատասխանատու ներկայացուցիչներ չեն կատարել տրված ցուցումները հայերի անվտանգության ապահովման մասին: Ինչ վերաբերում է կոտորածներին, ապա դրանք որպես քաղաքացիական կռիվների հետևանք՝ եղել են «փոխադարձ», որից, իբր, թուրքերն ավելի շատ են տուժել:

Թուրք պատմաբանները պնդում են, թե առհասարակ Հայկական հարց գոյություն չի ունեցել, որ այն հորինվել է Մեծ տերությունների, առաջին հերթին՝ Ռուսաստանի կողմից, շահադիտական նպատակներով: Թուրք հեղինակները զարգացնում են այն միտքը, որ Օսմանյան կայսրությունում հայերի վիճակի վատթարացման պատճառները 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո հայկական ազգային կազմակերպությունների ստեղծման և հայ բնակչության խռովարար պահվածքի հետևանքն են:

Թուրք պատմաբանների մեծ մասը, նշում է Սահակյանը, հայկական հարցի առաջացումը կապելով Մեծ տերությունների, մասնավորապես Ռուսաստանի և Անգլիայի միջամտության հետ, փաստորեն կրկնում է Աբդուլ Համիդ 2-րդի արտահայտած միտքը, թե «Հայկական հարցը հայերի հարցը չէ»:

Թուրք հեղինակների այս և այլ վկայությունները, եզրակացնում է հեղինակը, հերքվում են թեկուզ այն փաստի առկայությամբ, որ արևմտահայերի ազգային-ազատագրական շարժումը լայն թափ ստացավ միայն այն բանից հետո, երբ հայերը համոզվեցին, որ Մեծ տերությունները նպատակ չունեն լուծել Հայկական հարցը: Հենց այդ հանգամանքով է բացատրվում հայ իրականության մեջ ազգային քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների ի հայտ գալը:

Ռ.Սահակյանը մեջբերում է Քյամիլ փաշայի՝ Աբդուլ Համիդի Մեծ վեզիրի խոսքը, որ որոշակիորեն բացահայտում է օսմանյան կառավարողների՝ հայերի նկատմամբ տարվող քաղաքականության էությունը. «Այժմ մեր և Անգլիայի շահերը պահանջում են, որպեսզի Փոքր Ասիայում (մենք և Անգլիան չենք ընդունում «Հայաստան» խոսքը և նույնիսկ կփշրենք այն ծնոտները, որոնք արտաբերում են այդ բառը) մեր տարածքները ազատ լինեն ուրիշների միջամտությունից, հետևաբար այդ սրբազան նպատակին հասնելու համար անհրաժեշտ է հողի երեսից ջնջել, անխնա ոչնչացնել այդ հայ ազգը...: Եթե հայ ազգը ոչնչացվի և քրիստոնեական Եվրոպան չկարողանա Փոքր Ասիայում փնտրել որևէ

դրիստոնյայի, այդ ժամանակ նա մեզ հանգիստ կթողնի, և մենք կարող ենք զբաղվել մեր ներքին գործերով և վերափոխումներով»:

Չնայած 1890-ական թվականների հայկական կոտորածների մասին հակայական քանակությամբ արխիվային նյութերի և պաշտոնական փաստաթղթերի առկայությանը, թուրք հեղինակները գիտակցաբար ուրացության են մատնում Եվրոպական և ռուս հանրության լայն արձագանքները համիդյան ջարդերին և դաժանություններին, ավելին՝ փաստաբանում են Սուլթան Համիդին, որպես խոշոր պետական գործչի: Թուրք պատմաբան Իսմեթ Ալփասլանը գտնում է, որ սուլթանը հայերին վերաբերվում էր ոչ որպես ազգային փոքրամասնության, այլ որպես թուրքերի հետ հավասար իրավունքներից օգտվողների: Սակայն «անջնորհակալ» հայերը, որոնք արժանի չէին այդպիսի մարդկային ուշադրության, գազանաբար վերաբերվեցին թուրք ժողովրդի հետ և այդ հարկադրեց ստեղծել համիդյան գնդերը: Մեկ ուրիշ թուրք հեղինակ Ի.Օզկայան, գրում է, թե մինչև այն պահը, երբ հայերը դիմեցին զինված խռովությունների, Թուրքիայի որևէ տարածքում ոչ մի անգամ չեն եղել հալածանքներ և ճնշումներ հայերի նկատմամբ, որ նրանք ոչ միայն որևէ պատճառ չունեին հանդես գալու օսմանյան իշխանությունների դեմ, այլև որևէ լուրջ առիթ՝ «դժգոհելու իրենց ճակատագրից»:

Թուրք հեղինակների աշխատություններում գրեթե կաբար խեղաթյուրվում է հայ-թուրքական հարաբերությունների պատմությունը նաև երիտթուրքերի կառավարման ժամանակաշրջանում: Անդրադառնալով 1909թ. Ադանայի դեպքերին նրանք փորձում են կամ ժխտել զանգվածային ջարդերի փաստը, կամ էլ մեղքը բարդել հայերի վրա: Օզկայան, Դենիչմանը, Բելենը և ուրիշներ գտնում են, որ հայերը փորձ էին անում Կիլիկիայի տարածքում ստեղծել ազգային օջախ, որ հետագայում հենակետ պետք է ծառայեր Մեծ Հայաստանի կազմավորման համար: Որոշ թուրք հեղինակներ էլ Ադանայի դեպքերը դիտում են իբրև մահմեդականների և հայերի միջև քաղաքացիական կռիվների մի դիպված, որը հրահրվել էր տեղի հայերի կողմից: Ըստ նրանց պնդումների՝ թուրքական կառավարությունը, համիդյան իշխանության օրոք տեղի ունեցած Զեյթունի, Վանի, Սասունի ապստամբությունների ժամանակ, հարկադրված էր ուժ գործադրել, որի հետևանքով հավասարապես տուժել են և՛ հայերը, և՛ մահմեդականները: Հորինելով հայկական հեղափոխության վարկածը, թուրք պատմաբանները ձգտում են երիտթուրքական

ղեկավարների վրայից հանել պատասխանատվությունը՝ որպես Ադանայի կոտորածների փաստական կազմակերպիչներ: Հիմնական գաղափարը, որ զարգացնում են թուրք հեղինակներն իրենց աշխատություններում, հետևյալն է. երիտթուրքերի հեղափոխությունը առանց բացառության լիովին հավասարություն էր հռչակել կայսրության բոլոր հպատակների համար, հետևաբար որևէ անհրաժեշտություն չկար հայկական բարենորոգումներ անցկացնել, մանավանդ որ հայերի պահանջներն անհիմն էին և հրահրվել էին դրսից և, առաջին հերթին, Ռուսաստանի գործակալների կողմից: Ինչ վերաբերում է արևմտահայ բնակչության նկատմամբ գործադրվող բռնություններին և անօրինականություններին, ապա դրանք կրել են պատահական բնույթ: Մի հանգամանք ևս. ձգտելով ժխտել զանգվածային ցեղասպանության փաստը, թուրք գիտնականները փորձում են նվազեցված ներկայացնել հայերի թիվը Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում, պնդելով, թե հայերը, որպես նորեկներ, երբեք մեծամասնություն չեն կազմել Թուրքիայի տարածքի իրենց բնակության վայրերում:

* * *

Մենագրության 2-րդ գլխում (հեղինակ՝ Ռ.Սահակյան) Հայաստանի նոր պատմության հարցերը քննարկվում են ֆրանսիական պատմագիտության լուսաբանմամբ: Ֆրանսիացի հեղինակներն իրենց ուսումնասիրություններում առանձնակի տեղ են հատկացնում սուլթանական և երիտթուրքական կառավարությունների՝ հայերի նկատմամբ վարած քաղաքականությանը և 1915թ. իրադարձություններին: Ռ.Սահակյանի հետևությամբ՝ այդ հետազոտությունների մեծ մասը գրված է անաչառ դիրքերից, բազմաթիվ սկզբնաղբյուրների և փաստաթղթերի գիտական վերլուծության հիման վրա: Մասնավորապես՝ Իվ Տերնոնը, վերլուծելով հայկական հարցում XIX դարի վերջին Օսմանյան կայսրության քաղաքականությունը, ֆրանսիական դիվանագիտական փաստաթղթերի և դոկտոր Լեփսիուսի ուսումնասիրությունների հիման վրա գալիս է այն հետևության, որ զանգվածային կոտորածները կազմակերպված են եղել Սուլթան Համիդի կողմից, ի պատասխան այն բանի, որ հայերը պահանջում էին միայն բարեփոխումների իրականացում: Դատապարտելով 1894-96թթ. ջարդերը, Տերնոնը քննադատում է անգլիական և ֆրանսիական կառավարություններին, որոնք, անտեսելով միջազգային հասարակական կարծիքը, գերադասեցին հետամուտ լինել Թուր-

ոջիայի ամբողջականության պահպանման քաղաքականությանը և, բա-
ոցի բողոքի հայտարարություններից, կոնկրետ քայլերի չդիմեցին սուլ-
ոթանին սանձահարելու համար:

«Եվրոպան, - նշում է Իվ Տերնոնը, - ոչինչ չէր ուզում հասկանալ Հայ-
ոկական հարցում... Նա խաղից դուրս գալով հնարավորություն տվեց
նախապատրաստել և մարտադաշտը Թուրքիային թողնելով իրագործ-
ել 1894-96թթ. կոտորածները, ապա և 1915թ. ողբերգությունը»:

Հայկական հարցում Ֆրանսիայի թուրքամետ դերին անդրադարձել
է նաև Արթուր Բեյլերյանը դրա պատճառը բացատրելով ինչպես գործ-
ածարար շրջանների ֆինանսատնտեսական, այնպես էլ ռազմական շա-
հերով:

Ժ.Ալեմը, շարադրելով 1878թ. Բեռլինի վեհաժողովից հետո իրա-
դարձությունների հետագա ընթացքը նշում է, որ «կարմիր» սուլթանը
Թուրքիայի կազմից Բուլղարիայի և Բոսնիայի կորստից հետո Հայաս-
տանը դիտում էր որպես երկրորդ Բուլղարիա, որին պետք էր վերաց-
նել:

Ռասիզմին վերաբերող իր աշխատության մեջ է.Սալերը բացահայ-
տում է սուլթանի հայատյաց քաղաքականության էությունը, նկարագ-
րում է կազմավորված «համիդյան հեծելագնդի» վայրագություններն ու
բռնությունները: Ժ.Կարզուն գտնում է, որ XIX դարի վերջերի հայկա-
կան հուզումները թուրքական իշխանությունների համար լոկ պատըր-
վակ էին զանգվածային կոտորածներ կազմակերպելու համար: Անդրա-
դառնալով Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի նենգա-
փոխման փաստին նա գտնում է, որ դրա պատասխանատուն Անգլիան
է,որը 1878թ. հունիսին Թուրքիայի հետ շահեկան գաղտնի համաձայ-
նագիր կնքելով Կիպրոսի հարցով, փաստորեն բախտի քմահաճույքին
հանձնեց Հայկական հարցի լուծումը:

1915թ. ցեղասպանության պատմության հարցերն անշուշտ առավել
հանգամանորեն լուսաբանվել են ֆրանսիական հեղինակներ Իվ Տեր-
նոնի և Ժ.Կարզուի աշխատություններում: Մասնավորապես եղեռնին
նվիրված իր հատուկ աշխատության մեջ («Հայերը: Մի ցեղասպանու-
թյան պատմություն») Տերնոնը ոճրագործության պատճառների պարզաբանման նպատակով վերլուծում է երիտթուրքական կուսակցության գաղափարախոսական հայեցակետը: Նա մատնանշում է, որ երիտ-
թուրքերը, համոզվելով օսմանիզմի դոկտրինայի անիրական լինելու

փաստում, իրենց գաղափարական զենքը դարձրին թուրքիզմը, իսկ հայերը, այդ պարագայում, դարձան քավության նոխազներ: Հանգամանորեն անդրադառնալով ցեղասպանության նախապատրաստման և տեղահանության կազմակերպման մանրամասներին, Տերոնը Թուրքիայում հայերի կոտորածները գնահատում է որպես «20-րդ դարի առաջին ցեղասպանություն, առաջին կոլեկտիվ սպանությունը, որն իրագործվեց պլանավորված ձևով, ամբողջատիրական պետության ունեցած ժամանակակից միջոցներով»:

Ժ.Կարզուն իր «Օրինակելի ցեղասպանություն: Հայաստան. 1915թ.» աշխատության մեջ, բացահայտելով մի ամբողջ ժողովրդի բնաջնջման մեթոդիկ և նենգամիտ բնույթը, ընդգծում է, որ հայ բնակչության բռնի տեղահանումը հայերի խռովության հետ կապելու պնդումներն անհիմն են: Հեղինակի կարծիքով այդ վարկածը Օսմանյան կայսրության կառավարության կողմից պաշտոնապես ձևակերպվել է 1916թ. ու շահարկվել հետագայում: Ըստ էության՝ տեղահանության մասին որոշումը երիտթուրքերի պարագլուխների կողմից ընդունվել էր Վանի ինքնապաշտպանությունից առաջ:

Այնուհետև Ռ.Սահակյանն անդրադառնում է ֆրանսիական առանձին պատմաբանների ուսումնասիրություններին, որոնք, տուրք տալով թուրք պատմագիտությանը, միտումնավոր խեղաթյուրված են ներկայացնում հայ-թուրքական հարաբերությունների պատմությունը: Այսպես, Ժ.Լյարոշը գտնում է, թե իբր թուրքերը, լինելով իշխող ազգ, սկսած միջին դարերից համբերատար վերաբերմունք են ունեցել այլակրոն ժողովուրդների նկատմամբ: Որպես օրինակ նա վկայակոչում է, թե ինչպես X դարում իսպանացիների, ապա 1930-ական թվականներին՝ նացիստների կողմից հետապնդվող հրեաներն ապաստան են գտել Թուրքիայում: Պ.Մոզերն իր «Հայերը. ո՞րն է ճշմարտությունը» գրքում փորձում է ապացուցել, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայում այնպիսի ցեղասպանություն չի եղել, ինչպիսին եղել է ֆաշիստական Գերմանիայում: Ժ.Գարնիեն փաստորեն արդարացնում է Սուլթան Համիդին՝ արևմտահայերի ազատագրական ձգտումները կապելով ցարական գործակալների և ամերիկյան միսիոներների գործունեության, իսկ հալածանքների ուժեղացումը՝ հայերի խռովությունների հետ: Որոշ հեղինակներ էլ (Պ.Դյումեն և այլք) հայ ազատամարտիկներին որակում են իբրև խռովարարներ ու ահաբեկիչներ:

Որոշ հեղինակներ, կրկնելով թուրքական տեսակետը, հերքում են սակայն զանգվածային տեղահանության փաստը, գտնում, որ պատերազմական իրավիճակում այն անհրաժեշտ ձեռնարկում էր: Ինչ վերաբերում է կոտորածներին, ապա դրանք եղել են միայն ներքին բախումներ, դյուրոնցում, իբր, հավասարաչափ զոհ են գնացել և՛ հայերը, և՛ թուրքերը:

Գրքի երրորդ գլխում Ռ.Սահակյանն անդրադարձել է անգլիական դպատմաբանների ուսումնասիրություններին:

Հայ ժողովրդի XIX դարի և XX դարի սկզբի պատմության հարցերը հիմնականում ներկայացված են Կ.Ուոկերի «Հայաստան. ազգի գոյատևումը», Դ.Մարշալի «Հայաստանը՝ քաղաքակրթության օրրան» և «Հայերը արտաքսված ժողովուրդ», Ա.Նասիբյանի «Բրիտանիան և Հայկական հարցը. 1915-1923թթ.», Մ.Կ.Կրիկորյանի «Հայերը Օսմանյան կայսրության ծառայության մեջ» աշխատություններում:

Հայ ժողովրդի նոր պատմության հարցերն ավելի հիմնավոր է լուսաբանել Կ.Ուոկերը: Նա դրականորեն է գնահատում ռուս-պարսկական պատերազմի և Թուրքմենչայի պայմանագրի դերը Անդրկովկասի հայերի ճակատագրում: Նկարագրելով արևմտահայության ծանր դրությունը, անգլիացի հեղինակը մերկացնում է Սուլթան Համիդի հակահայկական քաղաքականությունը, նշելով, որ սուլթանը Հայկական հարցը ձգտում էր լուծել միայն ջարդերի միջոցով: Նրա կարծիքով համիդյան հեծելազորային գնդի ստեղծումը «բաժանիր և տիրիր» օրենքի առավել հմուտ և արդյունավետ կիրառման օրինակներից մեկն է: Ուոկերը, համեմատելով պանթուրքիզմը և ռասիզմը, գտնում է, որ այդ երկու գաղափարախոսությունները, պաշտպանելով բարձր ռասայի հասկացությունը, փաստորեն հանդես են գալիս մյուս ազգերի ոչնչացման կոչով:

Պանիսլամիզմի և թուրքիզմի գաղափարախոսությունների քննադատությանն անդրադարձել է նաև Ջ.Կուշները, որն իր «Թուրքական նացիոնալիզմի վերելքը. 1876-1908թթ.» գիրքում նշում է, որ համիդյան դարաշրջանում թուրքական մամուլը շեշտում էր այն միտքը, թե Անատոլիան երբեք ոչ մեկին չի պատկանել, բացի թուրքերից: Մ.Անդերսոնն ընդգծում է, որ իրենց դավանանքի պատճառով ենթարկվելով վայրենի հալածանքների՝ հայերը թուրքական դատարանում գրեթե հնարավորություն չունեին հասնելու արդարության, իսկ լորդ Պ.Բոլֆարը Սուլթան Համիդի ոճրագործությունները համարում է քաղաքակիրթ աշխարհի «հավերժական խայտառակությունը»:

Անդրադառնալով 1915թ. իրադարձություններին՝ Կ.Ուոկերը, Ջ.Լանգը և այլ հեղինակներ, նոր փաստաթղթերի հիման վրա եզրակացնում են, որ հայերի տեղահանումը և ջարդերը եղել են կանխամտածված և իրագործվել են երիտթուրքերի պարագլուխների հրամանով: Զուգահեռ անցկացնելով 1895 և 1915թթ. կոտորածների միջև, Կ.Ուոկերը գտնում է, որ երիտթուրքերին բնորոշ էր ռասայական մոլեռանդությունը, ռացիոնալիզմը և ծայրահեղ դաժանությունը: Հայերի ոչնչացումը նրանք դարձրեցին պետական քաղաքականություն: Անգլիացի գիտնականի կարծիքով, Մեծ եղեռնը դարի ֆենոմենն է, որը լրիվ համապատասխանում է «գենոցիդ» բառի բնորոշմանը, թեև այդ տերմինը հայտնվել է 1945 թվականին: Կ.Ուոկերն առանձին ուշադրություն է դարձրել նաև Կիլիկիայի հայերի՝ հանուն իրենց մարդկային իրավունքների պայքարի հարցերին (1919-1921թթ.): Լորդ Կինրոսսն ընդգծում է, որ քեմալականները երիտթուրքերի նման անվերապահորեն դեմ էին հայերի ինքնորոշմանը:

Այնուհետև Ռ.Սահակյանը վերլուծում է այն հեղինակների տեսակետները, որոնք այս կամ այն կերպ խեղաթյուրում են հայ-թուրքական հարաբերությունների պատմությունը: Այսպես, անգլիացի պատմաբանների մի մասն ամեն կերպ փորձում է մեղմացնել Սուլթան Համիդի անձնական պասասխանատվությունը հայկական ջարդերում, դրանք բացատրելով նրա՝ որպես մահմեդականների առաջնորդի, կրոնական մոլեռանդությամբ, կասկածամտությամբ, իրեն հետապնդող վախի զգացումով: Այդ պատճառով էլ, իբր, Սուլթան Համիդը չափազանց հիվանդագին էր ընդունում դրսից ձեռնարկվող ամեն մի միջամտություն՝ ի նպաստ քրիստոնյաների և, մասնավորապես, հայերի: Իսկ առանձին հեղինակներ (է. Մոնգո և այլք) կրկնում են թուրքական պաշտոնական տեսակետն այն մասին, թե սուլթանական Թուրքիայում միշտ էլ հայերի նկատմամբ ցուցաբերվել է համբերատար ու արդարացի վերաբերմունք:

Որոշ հեղինակներ, քննարկելով Հայկական հարցի հետ կապված Մեծ տերությունների դիվանագիտական պայքարի խնդիրը, ձգտում են հնարավորին չափ այլ կերպ ներկայացնել Մեծ Բրիտանիայի պահպանողական շրջանների բացասական դերը՝ արևմտահայերի ճակատագրում: Նրանք, փաստորեն, շրջանցում են այն փաստը, որ դարավերջում հենց անգլիական դիվանագիտության ակտիվ հակազդեցության շնորհիվ էր, որ Ռուսաստանը զրկվեց իր ռազմական հաղթանակների

պատուղների մի զգալի մասից, որի հետևանքով Թուրքիային վերադարձված տարածքներում հետագայում կազմակերպվեցին հայերի զանգվածային ջարդերն ու կոտորածները:

Հակառակ տեսակետ է զարգացնում պրոֆ. Ջ.Լանգը, գտնելով, որ Սան-Ստեֆանոյի պայմանագրով լիովին ապահովվում էին հայկական պահանջները, սակայն դրանք, Մեծ տերությունների և, մասնավորապես, Անգլիայի, նրա վարչապետ Բ.Դիզրայելու վարած քաղաքականության հետևանքով ոտնակոխ արվեցին: Նույն կարծիքին են և՛ Մ.Կրիկորյանը, և՛ Ա.Նասիբյանը, որոնք նշում են, որ Թուրքիայում թագավորող ճնշումներն ու հալածանքները անգլիական պաշտոնական շրջաններին շատ ավելի քիչ էին հետաքրքրում, քան այնտեղ սեփական ազդեցությունն ուժեղացման պարագան:

* * *

Աշխատության չորրորդ գլուխը (հեղինակ՝ Գ.Մախմուրյան) նվիրված է Հայաստանի նոր պատմությունը լուսաբանող՝ ԱՄՆ-ի ժամանակակից պատմագրությանը: Հեղինակի կարծիքով առավել ուշադրության են արժանի «Հայկական ցեղասպանությունը հեռանկարում» և «Լռության հանցանքը. Հայկական ցեղասպանություն» ժողովածուները, որոնք լույս են տեսել 1985-1986թթ., ԱՄՆ-ում:

Ամերիկյան հեղինակների հրապարակումները՝ հայ ժողովրդի նոր պատմության հարցերի վերաբերյալ, հիմնականում ունեն ծանրակշիռ աղբյուրագիտական հիմքեր և հիմնահարցեր, որոնք Գ.Մախմուրյանի կողմից քննարկվում են գիտական ու պատմական բարեխղճությամբ:

Մեծ ուշադրություն է նվիրվում Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական և տնտեսական կացության փոփոխությունների, արևմտահայերի սոցիալական ու իրավական վիճակի, ամերիկյան միսիաների գործունեության, Արևելյան և Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման հարցերին:

1915-23թթ. հայերի ցեղասպանության պատճառներին և օրինաչափություններին անդրադառնալիս հեղինակը հանդես է բերել ոչ միանշանակ մոտեցում՝ խնդիրը քննելով պատմա-սոցիոլոգիական, հոգեբանական տեսանկյունից: Ամերիկյան պատմաբանների աշխատություններում բացակայում են հայերի ազգային-ազատագրական շարժման, գյուղացիական հուզումների, ինքնապաշտպանական քայլերի պատճառների վերլուծությունը:

Մի շարք աշխատություններում չափազանցվում է ԱՄՆ-ի հայա-

նպաստ դերը. լռության է մատնվում Ռուսաստանի դրական գործողությունները Հայկական հարցում, տուրք է տրվում հայկական ցեղասպանության ժխտման կամ արդարացման թուրք պատմագրության շինծու տեսակետներին: Այդուհանդերձ՝ հայ ժողովրդի նոր պատմությանը և, մասնավորապես, Հայոց ցեղասպանությանը նվիրված ամերիկահայ պատմաբանների ուսումնասիրությունները հայ պատմական մտքի և միջազգային հայագիտության կարևոր, արժեքավոր մասն են կազմում:

Այն հանգամանքը, որ արաբները և արևմտահայերը, որպես Օսմանյան կայսրության հպատակներ, ունեցել են ընդհանուր ճակատագիր ու նպատակներ, քիչ դեր չի խաղացել, որպեսզի արաբ պատմագրությունն առանձնակի ուշադրություն նվիրի հայ-թուրքական հարաբերությունների, Արևմտյան Հայաստանի և Հայոց ցեղասպանության պատմության հարցերին: Արաբ պատմաբանները հստակ կերպով բացահայտել են Աբդուլ Համիդի ռեժիմի բռնատիրական էությունը, շեշտել, որ կայսրության մեջ չի եղել հավասարություն քրիստոնյաների և մահմեդականների միջև, որ հայկական կոտորածներն իրագործվել են հայկական խնդրին վերջ տալու նպատակով: Մեկնաբանելով երիտթուրքերի պանթուրքական ծրագրերը, արաբ հեղինակները դրանք որակում են որպես «շովինիստական, ռասիստական ու ֆաշիստական»:

Արաբ պատմաբանների կողմից լայնորեն լուսաբանվում է արևմտահայության 1915թ. ողբերգությունը: Նրանց աշխատություններում հիմնականում անաչառ դիրքերից են ներկայացվում հայկական ցեղասպանության պատճառներն ու շարժառիթները, հայ-թուրքական հարաբերությունների իրական պատկերը (Ֆաուդ Խաֆիզ, Մրվան ալ-Մուդավար, Ամին Սահդ, Մուսա Պրենս, Ջիխադ Սալեխ, Օսման ատ-Տարկ, Ֆայեզ ալ-Խոսեյն և ուրիշներ): Գրեթե բոլոր արաբ հեղինակներն ընդունում են ցեղասպանության փաստը, ընդգծում, որ հայերի բնաջնջումը երիտթուրքերն իրագործել են նախօրոք մշակված ծրագրով: «Հայերի ցեղասպանությունը 20-րդ դարի սև էջն է», - գրում է Եգիպտոսի նշանավոր պատմաբան Ֆաուդ Խաֆիզը:

* * *

6-րդ գլխի հեղինակը՝ Ա.Ա.Մանուչարյանը հայոց ցեղասպանության հարցը քննության է առել գերմանական հեղինակների լուսաբանմամբ: Ինչպես նշում է հեղինակը, հայերի ցեղասպանությունը Գերմանիայում առաջին անգամ առանձին մենագրության քննության առարկա է դար-

ձել 1977թ., երբ Մյունխենի Հայկական հարցի գծով ինստիտուտը հրատարակեց Պ.Լաննեի «Հայաստան. 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը» գիրքը: Այնուհետև սկսեցին լույս տեսնել նորանոր ուսումնասիրություններ, բազմաթիվ գիտահանրամատչելի հոդվածներ, վերահրատարակություններ, որոնք ուղղակիորեն առնչվում են եղեռնի խնդրին:

Ըստ հեղինակի հիմնահարցին վերաբերող գիտական աշխատությունները հարկ է բաժանել երեք խմբի: Առաջին խմբին են վերաբերում այն հետազոտությունները, որտեղ փաստագրական նյութերի և աղբյուրների մանրազնին ուսումնասիրության հիման վրա օբյեկտիվ և անաչառ դիրքերից վերլուծության են ենթարկվում ցեղասպանության պատճառները և նրա հանցավոր բնույթը (Ռ.Պիտերս, Տ.Հոֆման, Ժ.Քոչարյան, Ռ.Պեշլ, Պ.Լաննե, Ա.Ռենց, Ռ.Զիորդանս և ուրիշներ):

Երկրորդ խմբին են վերաբերում այն ուսումնասիրությունները, որտեղ հայկական կոտորածները հիշատակվում են ի միջի այլոց, փաստորեն՝ կասկածի տակ է առնվում հայերի ցեղասպանության պատմական իրողությունն իսկ:

Վերջապես երրորդ խմբի հետազոտողները լրիվ անտեսում են ցեղասպանության իրողությունը:

Գերմանական հեղինակների աշխատություններում առանձնակի տեղ է զբաղեցնում հայկական սպանդին Գերմանիայի մեղսակցության և պատասխանատվության հարցը: Նրանց ճնշող մեծամասնությունը կամ երկմտում է, կամ էլ փորձում է արդարացնել գերմանացիների դիրքորոշումը հայերի նկատմամբ: Շատ քչերն են, որ խնդիրը լուսաբանում են որոշակիորեն՝ հաշվի նստելով փաստական նյութի և պատմական իրողությունների հետ: Ընդ որում, նման հեղինակների կողմից գերմանական կառավարության դիրքորոշումը Հայկական հարցում քննարկվում է առանձնացված այն վերաբերմունքից, որ ունեցել են հասարակության տարբեր խավերը, առանձին անձինք, որոնք անկեղծորեն ձգտել են ինչ-որ չափով դյուրացնել հայ ժողովրդի տառապանքները:

Պ.Լաննեի կարծիքով, գերմանական զինվորական ղեկավարությունը միակն էր, որ կարող էր «կանխել երիտթուրքերի ոճրագործությունը, բայց նա ոչ մի քայլի չդիմեց»: Նա գտնում է, որ գերմանական հանրահայտ աշխատություններում միտումնավոր նվազեցվում է ցեղասպանության զոհերի թիվը, կառավարության մեղքը ամբողջովին վերագրվում է քրդերին և չերքեզներին: